Տ. ՎԱՉԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԻՐՋԱԽԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ԾԱՂԿԱՁԱՐԴԻՆ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(10 ապրիլի, 2022 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Եւ ժողովուրդքն, որ առաջին եւ զկնի երթային՝ աղաղակէին եւ ասէին. օրհնութիւն որդւոյ Դաւթի, օրհնեալ, որ գայ յանուն Տեառն, օրհնութիւն ի բարձունս»
(Մատթ. ԻԱ. 9)։

Սիրելի՛ հավատացյալներ, ահա այսպիսի օրհնաբանությամբ էին Երուսաղեմ մտնելիս դիմավորում մեր Տեր Հիսուս Քրիստոսին։ Ծերերը, պատանիներն ու երեխաները ձիթենիների եւ արմավենիների ճյուղերով էին. շատերը մոտենում էին, իրենց հագուստը նետում Նրա ոտքերի առաջ, եւ այդ մեծ փառքով Հիսուս մտնում է Երուսաղեմ։

Ղուկաս ավետարանիչն ասում է՝ երբ պիտի մտներ Երուսաղեմ, Հիսուս նայեց քաղաքին վերեւից՝ Ձիթենյաց լեռից, եւ արտասվեց ու մարգարեացավ, թե ինչ է սպասելու նրան, որ երբեք չլսեց իր մարգարեներին, իր առաջնորդներին, իր հայրապետներին, եւ ապա այդպիսի զգացումներով մտավ Երուսաղեմ (տե՛ս Ղուկ. ԺԹ. 41—44)։ Եւ ինչպես ավետարանիչներն են ասում, շատ մեծ դղրդյունով, մեծ աղմուկ-աղաղակով էր այդ ամբողջն ընթանում։

Երբ Նա մտավ տաճար, տեսավ այնտեղ աղավնավաճառներին, այնտեղից մաքրեց եւ ասաց, որ Իր տունը՝ Աստծու տունը, միշտ պիտի լինի աղոթքի եւ օրհնության տուն։ Եւ հենց այդ նույն տաճարում մանուկները, ինչպես այսօր առավոտից այստեղ՝ մեր տաճարներում են, աղաղակում, օվսաննա էին բղավում եւ օրհնաբանում էին Տեր Հիսուսին։ Նրանց բերանը փակել փորձողներին Հիսուս ասում էր. «Եթե մենք այսօր նրանց բերանը փակենք, այստեղ այս քարերը պիտի աղաղակեն»։

Սիրելինե՛ր, մեր Տեր Հիսուս Քրիստոսի հաղթական մուտքը Երուսաղեմ սկսվեց ընդամենը մեկ օր առաջ՝ Ղազարոսի հարության մեծ հրաշքից։ Հիսուս Իր աստվածային շնորհներն այդ երեք տարվա վարդապետության ընթացքում բաշխեց Իր հետեւորդներին կամաց-կամաց՝ սկզբից խոսքերով, ապա բուժեց հիվանդների ոտքերը, ձեռքերը, աչքերն ու ականջները, ապա շատերի ամբողջական մարմինը մաքրեց բորոտությունից, տվեց շարժվելու հնարավորություն եւ ավելի ուշ փառահեղ հարության հրաշքներ կատարեց՝ Հայրոսի աղջկան, ապա Ղազարոսին, որ չորս օր մեռած էր, եւ նրան գերեզմանից հարություն տվեց։

Տերը, հիրավի, երբեք չէր շտապում Իր վարդապետությունը կատարելիս, իսկ արդեն Երուսաղեմ մուտքին, հրեական Զատիկն էր մոտենում, եւ ինչպես հրեաներն էին, հին ավանդության համաձայն, հինգ օր առաջ գառներ վերցնում, տուն տանում եւ պահում, այդպես էլ Քրիստոս հինգ օր առաջ այլեւս Երուսաղեմում էր, որովհետեւ այնտեղ էին ամբողջանալու այն մեծ վարդապետությունն ու տեսիլքը, որոնց համար Աստված մարդացել էր, բժշկել, առակներ խոսել եւ կատարել հարության հրաշքներ։

Եւ հենց այստեղ է, որ պիտի մտներ Երուսաղեմ, մաքրեր տաճարը եւ ապա խոսեր այն օրերի հայտնիների հետ՝ սադուկեցիների, փարիսեցիների, ղեւտացիների ճշմարտությունից, Իր գլուխն օծվեր յուղով, ապա մոտենար Իր առաքյալներին, նրանց ոտքերը լվար, Վերջին ընթրիքը կատարելով՝ հաստատեր հաղորդության խորհուրդը, որից հետո մատնվեր, տանջվեր, չարչարվեր, խաչվեր, թաղվեր, հարություն առներ հրաշափառորեն եւ երկինք համբարձվեր։

Այս ամբողջ ճշմարտությանը, որ մեզ փոխանցվում է Ավետարանից, սիրելի՛ հավատացյալներ, գալիս են լրացնելու մեր մտածումներն ու հիշողությունները եւ աստվածաշնչյան այդ բոլոր դրվագների մեր ապրումները, որովհետեւ Եկեղեցին, գրեթե երկու հազար տարի պատմելով Հիսուսի հաղթանակի մասին աշխարհի վրա, այս ամբողջն իրականացնում է իր ծիսաարարողակարգի միջոցով, Սուրբ Գրքի մեկնությամբ։ Ներկայացնելով բոլոր արարողությունները, որ տեղի են ունենում մեր եկեղեցում պատարագների, ժամերգությունների եւ տոնակատարությունների միջոցով՝ մենք վերանորոգում եւ վերականգնում ենք այս ամբողջը՝ տեսանելին, անտեսանելին։

Եւ ահա այսօր մենք եւս, երբ այստեղ ենք՝ մեր սուրբ տաճարում, հաղորդվում ենք մեր հայրերի Աստծուն մեր գեղեցիկ պատարագի, մեր մեղեդիների ու աղոթքների, Սուրբ Գրքի ընթերցանության միջոցով, հաղորդակից ենք լինում եւ այն կրոնականին, այն աստվածայինին, այն սուրբգրայինին, որը մեր տոների եւ արարողությունների հիմքն է։

Այս Ծաղկազարդի տոնը հենց մեկ անգամ եւս գալիս է մեզ կոչելու, որ ինչպես Հիսուս մաքրեց տաճարը, այդպես եւ մենք մաքրենք մեր սրտերն ու հոգիներն ամեն աղտեղությունից եւ աղոթքով, ապաշխարությամբ ու խոստովանությամբ բացենք մեր հոգու եւ սրտի դռները եւ այնտեղ բնակեցնենք մեր Հիսուսին։ Թող մեր սիրտն ու միտքը դառնան մի նոր Երուսաղեմ, մենք ի հոգեւորս պատրաստ լինենք այդպիսի՝ ճյուղերով հոգեւոր երգեցողության, այդպես՝ զգեստներ նետելով, որոնք մեր աղոթքները կարող են լինել եւ մեր խոնարհումով, որ կարող է լինել մեր հոգեւոր կյանքը։ Այդպես կարողանանք ընդունել մեր հոգու եւ սրտի մեջ Քրիստոսին՝ դառնալով մի նոր Երուսաղեմ։

Այո՛, սիրելինե՛ր, այսօրը նաեւ գարնան գեղեցկությամբ է համակված, ու տեսնում ենք, որ ամենուր ժողովուրդը, ուռենու ճյուղեր վերցրած, գալիս է տաճար աղոթելու, ընդ որում՝ շատերը գալիս են՝ մանուկների ձեռքը բռնած։ Սա նաեւ այն բանի շնորհիվ է, որ վերջին տարիներին Վեհափառ Հայրապետն այսօրը հռչակել է նաեւ Մանուկների օրհնության օր։ Ու շատ ծնողներ իրենց երեխաներին բերում են տաճար՝ ստանալու օրհնություն եւ հաղորդվելու մեր հայրերի սրբությունների հետ։ Հիրավի, սիրելինե՛ր, կցանկանայինք, որ այս տաճարներից դուրս, որտեղ մենք հավաքված «Հայր մեր» ենք ասում, «Տէ՛ր, ողորմեա՛» երգում, «Սո՛ւրբ, Սո՛ւրբ» մեղեդին լսում կամ «Առաւօտ լուսոյ» երգում, ձեւավորվեր կրոնական ու հոգեւոր միջավայր։

Մեր տաճարները դառնում են մեզ համար փոքրիկ օազիսներ, հոգեւոր փոքրիկ կղզյակներ, որտեղ պահպանվում է կրոնական միջավայրը։ Հիսուսի շրջանը շատ կրոնական էր՝ ոչ միայն հրեականը, այլ նաեւ հռոմեականը, եւ ընդհանրապես Մերձավոր Արեւելքն այդ օրերին։ Մենք այսօր աշխարհիկության մեջ ենք, եւ շատ անգամ այնպես չի ընթանում մեր հոգեւոր կյանքը, ինչպես պիտի ընթանար, որովհետեւ կրոնական համայնքներ չեն ձեւավորվում։ Եթե մենք ընթերցենք Սուրբ Գիրքը, աղոթենք, ապրենք կրոնական պատգամներով, որոնք մեր Եկեղեցու հայրերն են տալիս՝ ձեւավորելով կրոնական միջավայր տաճարից դուրս,

կտեսնենք՝ ինչպես է փոխվում յուրաքանչյուրիս կյանքը, որը սիրով կլցվի միմյանց նկատմամբ, կունենանք առավել հարգանք քան այսօր, առավել պատասխանատվություն մեր ծնողների, մեր զավակների, երկրի, մարդկության եւ ընդհանրապես ամեն ինչի հանդեպ։

Ահա այստեղ է, որ նորից գնում ենք Երուսաղեմ ու տեսնում, որ Հիսուսի մուտքը Երուսաղեմ ոչ միայն այսօրվանն էր, այլ նաեւ վաղվանը։ Ուրեմն՝ նշանակում է, որ մուտքը Երուսաղեմ ուներ երկրորդ իմաստ՝ այն, որ Տիրոջ Երկրորդ գալուստը լինելու է, եւ հարկավոր է պատրաստվել։ Եկեղեցու հայրերն ասում են, որ երբ Քրիստոս գա երկրորդ անգամ, արեւելքից պիտի գա, ու պիտի տեսնենք Նրան։ Մեռելները պիտի հարություն առնեն եւ ընդառաջ գնան Նրան, որովհետեւ Նա գալու է սրբերի հետ եւ հրեշտակների, եւ այդ օրը նաեւ երեկո չի լինելու։ Ուրեմն՝ պատրաստ պիտի լինենք Տիրոջ Երկրորդ գալստյանը՝ նաեւ այս Ծաղկազարդի տոնով։ Ու պիտի տեսնենք, որ եթե այսօր դուրս ենք գալիս ու արեւոտ օր ենք տեսնում, ամենուր տեսնում ենք մեր երեխաներին՝ այս ծառի ճյուղերով ու ծաղիկներով, այդպիսին դարձնենք մեր սիրտն ու հոգին ու կտեսնենք՝ որքան ուրախ ու երջանիկ ենք։ Եւ թող Աստված օրհնի մեր այդ բարի ընթացքը, այժմ եւ հավիտյանս. ամեն։